ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊՐՈՖ. **ՌՈՒԲԵՆ ԿԱՌԼԵՆԻ ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆԻՆ**

Ձ Ե Կ Ո Ւ Յ Ց Ա Գ Ի Ր

Մեծարգո՛ պրն. Միրզախանյան,

Ձեր հանձնարարությամբ ս.թ. փետրվարի 13-ից ձեռնամուխ ենք եղել վերհանելու բանաստեղծ Ռուբեն Սեւակի կենսագրական, հասարակական գործունեության եւ գրական բարձր շերտերը քննող խոհագրությունների համալսարանական երկրորդ մրցույթի գրավոր տասնութ աշխատանքների որակական հատկանիշները:

Մրցույթին մասնակցել են համալսարանի վեց բաժանմունքների 16, այդ թվում՝ բանասիրականից՝ 9, սկզբնական կրթության բաժանմունքից՝ 3, կրթության հոգեբանության եւ սոցիոլոգիայի, հատուկ կրթության, պատմության եւ իրավագիտության, օտար լեզուների բաժանմունքներից՝ մեկական ուսանող, եւ 2 աշակերտ հենակետային ավագ վարժարանից: Ողջունելի է, որ մրցույթին մասնակցել են նաեւ տղաներ, ինչը հաճելի բացառությունների կարգից է:

Մեկ ամսվա ընթացքում կատարել ենք աշխատատար եւ ժամանակատար մանրակրկիտ ստուգում, հնարավորինս արժեւորել, համադրել ու դասդասել եղած գրավորները՝ վերլուծական, ազգային ճանաչողական եւ ստեղծագործական տեսակետներից:

Մեր առաջին հաջողությունը պիտի համարել երիտասարդության համընդհանուր սիրո, խանդաղատանքի՝ նման ներկայացուցչական բնաբուխ վերաբերմունքը Սեւակ երեւույթի, բանաստեղծական մնայուն արժեքների նկատմամբ, ինչին էապես նպաստել է Ֆրանսիայում ապրող պատմաբան, ազգային գործիչ եւ բարերար, բանաստեղծի եղբորորդի Հովհաննես Չիլինկիրյանի հոգածու ձգտումը խոշորագույն անհատականության, մարդուն ու ժողովրդին անսակարկ սիրով փարված բժիշկ-բանաստեղծի արժանի հանրահռչակման խնդրում, ինչը վկայում է եւ այս մրցանակաբաշխության բարձր հովանավորությունը:

Մեծարգո՛ նախագահ,

Մենք վստահ ենք, որ Դուք առանձնակի գոհունակություն կապրեք, եթե մենք ընդգծենք այս մրցույթի մյուս շահեկան առանձնահատկությունները՝ սուր մրցակցային բնույթը, նյութին մոտենալու եւ այն բացահայտելու ուսանողական բազմակողմ հետաքրքրասիրությունը, ինչի արդյունքում անհամեմատ բարձրացել է

շարադրանքների որակական մակարդակը: Այս հանգամանքների հանրագումարն էլ մեզ հնարավորություն է տվել ըստ արժանվույն առանձնացնելու լավագույններին:

Կից գրությամբ ներկայացրել ենք տասնութ աշխատանքների որակական դասակարգումը՝ ըստ նիշերի հերթագայության: Մրցանակակիր աշխատանքները վերադարձնում ենք համալսարանի քարտուղարություն, մնացածը պահվում են մեզ մոտ:

Առաջարկում ենք գլխավոր մրցանակ չշնորհել:

Իսկ ահա Ձեր բարձր ուշադրությանն ենք ներկայացնում չորս առաջնակարգ մասնակիցների շարադրանքների արժեւորումը՝ առաջնորդվելով համակողմանի գնահատության սկզբունքից.

Մեկ առաջին մրցանակ՝ 500 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ
ՍԱՐԳՍՅԱՆ ԱՆՆԱ (բանասիրական բաժանմունք, ԱՄ 2-րդ լսարան):

Երկու երկրորդ մրցանակ՝ 200 – ական ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ
ԱՄԱԼՅԱՆ ԳՈՀԱՐ (օտար լեզուների բաժանմունք, ԱԲ 4-րդ լսարան)
ԲՈՅԱՋՅԱՆ ԱՍՏՂԻԿ (բանասիրական բաժանմունք, ԱԲ 4-րդ լսարան):

Մեկ խրախուսական մրցանակ՝ 100 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ
ԲԱՐՍԵՂՅԱՆ ՄԻԼԵՆԱ (համալսարանի հենակետային ավագ վարժարանի 11-րդ դասարան):

ՍՈՒՐԵՆ ԴԱՆԻԵԼՅԱՆ

Համալսարանի Հայ նոր եւ նորագույն գրականության
եւ նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ

Մարտ 07, 2018